

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք զիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և առաւ օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Խաւարատէր մամուլը—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անգլո-թիւրքական միջամտութիւն: Արտաքին լուրեր:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Նամակներ հանդիսից: Բնդհանուր ուսուցչական ժողով Թիֆլիսում:

ԽԱՍԱՐԱՍԵՐ ՄԱՍՈՒՆ

Ամեն բանում շողջորդել ամբողջ նախապաշարմունքին, յարմարել ժողովրդի մոլեռանդութեանը, զրգուել նրա վատ կըրքերը,—դա շատ շահաւէտ գործ է: Ստոր և անաղիւս, խաւարատէր մամուլը ինչպէս ուրիշ տեղ, այնպէս էլ մեզ մօտ այդ շահաւէտ մեթօդ է գործ դնում, իր բաժանորդները բազմացնելու համար:

Ընդհանրապէս խօսել ճշմարտութիւնը, յարձակվել նախապաշարմունքի, ազիտութեան և խաւարի դէմ—դա շահաւէտ չէ, դա բաւական վտանգաւոր ձեռնարկութիւն է:

Եւ խաւարատէրները իրանց նպատակին հասնելու համար ամեն միջոց ներելի են համարում: Նրանց համար սովորական բան է մեծ մեծ, թէ և զարգակահանող բառեր գործ դնել, ոչինչ միայն չունեցող ուռած Ֆրազներ արձակել, զրգուել ժողովրդի կրքերը, իրանց ցոյց տալ դարեւոր, ամենասուրբ գաղափարների պաշտպան և պահպանող, հաւատացնելով որ եթէ իրանք չը լինէին, ամեն բան կը քանդվէր, ամեն բան կոչնչացնէր հակառակ մամուլը, աղաքայել իրողութիւնները, յեղաշրջել ճշմարտութիւնը, շողջորդել խաւարամիտ ամբողջ թանձր նախապաշարմունքին,—այդ ամենը ներելի է համարում ամեն երկրի

խաւարատէր մամուլը, որպէս զի բաժանորդներ թիւը աւելանայ: Նրանց ինչ վոյթ, որ հասարակութիւնը կանխարոյականանայ և աւելի էլ կը խորասուզվի տղիտութեան, խաւարի անթափանցելի մթութեան մէջ:

Դիցուք թէ ամբողջ մէջ կազմակերպվել է այն համոզմունքը որ աւետարանը զանազան է լինում, որ հայերի, յոյների, բողոքականների և կաթօլիկների աւետարանները բոլորն էլ միմեանցից տարբերվում են: Ժողովուրդը չէ հասկանում որ մեծ զանազանութիւն կայ միայն եկեղեցիների դաւանաբանական մասի, նրանց վարդապետութիւնների մէջ, նրանց ծէսերի ու արարողութիւնների մէջ, բայց աւետարանը, ֆրիստոսի խօսքը, ամեն լեզուով, ամեն ազգութիւնների և ամեն եկեղեցիների մէջ ընդհանուր է, մի է, համանման է: Եթէ հայոց աւետարանի մէջ ֆրիստոսը ասում է «սիրեցէք միմեանց» նայել ասում է նա բառ առ բառ և բողոքական ու կաթօլիկ աւետարանների մէջ: Եթէ նա այս լեզուով աւետարանի մէջ ասում է «սիրեցէք միմեանց» ի՞նչ մի այլ լեզուով աւետարանի մէջ նա չէ ասում «ստեցէք միմեանց»: Բոլոր աւետարանները բառ առ բառ միմեանց նման են և ոչ զք իրաւունք չունի, թարգմանելով կամ տպագրելով աւետարանը, փոխել մի բառ անգամ ֆրիստոսի վարդապետութեան, նրա խօսքերի, կամ աւետարանիչներից արած նրա կեանքի նկարագրութեան մէջ: Մի խօսքով բոլոր չորս աւետարանները և առաքելների գրաւածները բոլոր քրիստոնեայ ազգերի և եկեղեցիների մէջ կատարելապէս նման են միմեանց ընդհանուր են, մի են ամեն եկեղեցիներում:

Զանազանութիւնը աւետարանների մէջ միայն նրանում է կայանում, որ ամեն ազգ կարգում է աւետարանը իր մայրենի լեզուով: Եւ թշուառ է այն ազգը, որ չունի աւետարան իր մայրենի, կենդանի, հասկանալի լեզուով: Եւ դա անհրաժեշտ է նախ որովհետեւ ամբողջ կարող է հասկանալ ֆրիստոսի բարոյական վարդապետութիւնը միայն իրան համար հասկանալի մայրենի լեզուով և երկրորդ՝ որ աւետարանի մայրենի լեզուով թարգմանելով աւետարանը կարող է արդիւնաւոր լինել միայն իր մայրենի լեզուով: Եւ աւետարանը ամեն ժամանակ, ամեն քրիստոնեայ ազգերի մէջ եղել է միշտ ամենատարածված ընթերցանութեան գիրք, ուրիշ նրանով ամենահեշտ է լինում տարածել բարոյական սկզբունքները մայրենի լեզուով: Եւ արածել նայն իսկ մայրենի լեզուն, ուրիշ և աւելի էլ հաստատ հիմք վրա դնել ազգայնութեան զգացմունքը ամեն ազգի մէջ:

Բաւական է որ աւետարանը թարգմանված է աշխարհաբար, մայրենի հայոց լեզուով: Դեռ մաքուր խմբագրելով կարող ենք ամեն հային խորհուրդ տալ կարգաւ այդ աւետարանը:

Ճշմարտ է որ տգէտ և խաւար ամբողջ կարծում է որ աւետարանները զանազան են լինում այլ և այլ ազգերի մէջ, որ հայոց աւետարանը ուրիշ բանի վրա է կառուցված, որովհետեւ քրիստոնեայ ազգերի և եկեղեցիների մէջ կատարելապէս նման են միմեանց ընդհանուր են, մի են ամեն եկեղեցիներում:

միմեանցից ջոկվում են իրանց զաւանուութիւններով, վարդապետութիւններով, բայց որ աւետարանը մի է, միայն հարկաւոր է որ ամեն ազգ կարգաւ աւետարանը իր մայրենի լեզուով, նախ որ հասկանալի նրան, երկրորդ՝ որ պահպանի իր մայրենի կենդանի լեզուն իր եկեղեցու մէջ:

Եւ ահա խաւար ամբողջ վերցնելով անգլիական բիբլիական ընկերութեանց հայոց աշխարհաբար, մայրենի լեզուով թարգմանած աւետարանը, յետ է տալիս ծախողին, տեսնելով որ գրքի ճակատի վրա էջմիածնի տպարանի անունը չը կայ և ասում է. «դա պրօտեստանտների աւետարան է»:

Այդ տեսակ տգիտութիւն տգէտ ամբողջ կողմից ներելի է:

Բայց ի՞նչ կասէք խաւար մամուլի մասին, որ առաջնորդվում է ուսեալ իրանց անուանող շողջորդ և շահաւէր անձինքներով, որոնք իրանց շահ են տեսնում շողջորդել ամբողջ խաւարամուտութեանը, ի՞նչ կասէք այդ խաւար մամուլի մասին, երբ նա խաւար և տգէտ ամբողջ անմիտ խօսքերը կրկնելով հրապարակապէս արտասանում է հեռեկեալ անմիտ մտքերը, կարծես թէ ֆրիստոսի աւետարանը մի է, կարծես թէ աշխարհիս երեսին հազար ու մի այլ և այլ ու միմեանցից տարբեր աւետարաններ կան:

Եջմիածինը թողած (ո՛ւր է գեւ ևս էջմիածնի աշխարհաբար լեզուով թարգմանած աւետարանը), նա (այսինքն համագային մամուլը) ժողովրդին ուղարկում է ամերիկական հաւատարմաւոր ընկերութիւնների մօտ աւետարանն առնելու, և կարծում ենք որ ժողովրդին կրօնափոխութեան հրաւիրելու առաջին քայլն է այդ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՆԴԻՍԻՑ

Նամակ երկրորդ

Ինչպէս յիշեցի առաջին նամակումս գիտնալիս եւ ուսման արանակն *) բաժնի գտնվում է գիտարեւոտականի հետ միասին մի շինութեան մէջ: Նա բաղկացած է ութ առանձին առանձին կլաներից, որոնցից մի քանիսը շատ աղքատ և անկարգ են, ինչպէս է բժշկական մասը: Առհասարակ այս բաժնիը աղքատ է, անկարգ և անկանոն է: այստեղ գտնվում են այնպիսի բաներ, որոնց տեղը բոլորովին ուրիշ բաժնիների մէջ պէտք է լինէր: Այս բաժնի հէնց սկզբում տեսնում ես, որ մի ֆրանսիացի կին մի տղայի հետ միասին ծախում են չը կոտորվող ապակեայ բաժակներ, շիշեր և ամաններ, երկու թուղթի մէջ ըստ ուղած վնասվելով մի պտտող փողբիկ անիւի միջոցով թափում քանդում է տղան բաժակի վրա: Նրանք ինչ հաւատացրին որ իրանք թէպէտ ֆրանսիացիներ են, բայց ծախած ապրանքը ուսուսական է. սրանով, ի հարկէ, իմ կանխածանքս չը փարատվի: Զանազան ֆոտոգրաֆիաների հաւաքած կլաներներից ամենահետադրեւելի է «Իռոսական պանտէօնը», որտեղ հանդիսացրած են ուսուսականների և գիտնականների կենդանապատկերներ: Ֆոտոգրաֆիաների դէմ ու դէմ գտնվում են այն արդիւնագործութիւնների իրերէններ:

*) Научно-учебный отделъ.

ը, որոնց արդիւնագործութիւնը համար պէտք է գործըրված լինի գեղարուեստը. օրինակ ֆարֆօրի ափսէներ, վազաներ, բաժակներ, կենդանագործութեանը, ոսկեայ և արծաթեայ նկարներով, փայտեց և ուրիշ նիւթերից գեղարուեստական ձեւով պատրաստած առարկաներ, մօզէլներ, բազմազան նկարներ և այլն: Քիչ տեղ չեն բռնում այս բաժնում երաժշտական գործիքները, բազմաթիւ պիանոներ, ֆլէյտներ, կլարնետներ, ջութակներ, պիանինօներ, այդ բոլոր գործիքները կարծես ուղղում են ասել որ Ռուսաստանում մարդիկ իրանց օրերը բաւական ուրախ են անցկացնում: Երբեք թէ երեք սպիտակ պիանինօ և ֆօրտեպիանօ ջոկվում են իրանց սև ընկերներից, կարծես՝ հենց մէկակ իրանց գոյնով: Կովկասցիներ այստեղ չէ տեսնում իր գուռնան ու քաղաքանը, սաղը, թաւն ու դաւալը. մի երաժշտական գործիքները գլխաւորապէս չինում են նոյն իսկ նրանց ածողները, նրանք դեռ մի առանձին արդիւնագործութեան առարկայ չեն դարձել և առհասարակ մեծ տարածումն չեն ստացել: Երկտարակաւութեան վերաբերելով առարկաների թիւը շատ փոքր է. այստեղ չը կան ոչ յայտնի Եւրօլիօլի, ոչ էլ Չէկօլիօլի գիտները: Մինչև համարն ուսական հանդիսի բազմվելը Ս. Պետերբուրգում կար լինելուական հանդէս, որտեղ ամիսով մէկ էին բազմաթիւ ապարատներ, մեքենաներ և ուրիշ հարուստ իջեկցիաներ երկտարակաւութեան վերաբերեալ. նրանք, ի հարկէ, ասելի կատարեալ հասկացողութիւն էին տալիս այս ուժի ներկայ դրութեան մասին. իսկ նայելով հանդիսի երկտարակաւութեան վրա, համոզված ես որ այս բաժնում ոչ կարգ և ոչ կանոն կայ: Անցնելով բժշկական մասը դար-

ձեալ գտնում ես մի և նոյն աղքատութիւնը, մի և նոյն անկարգութիւնը. տասը էկսպօնէնաներից, չորսը ներկայացրել են արեւոտական առանձին և սրանց վերաբերեալ պարագաներ: Այստեղ կայ և առանձնաբաժան կարկէտ, որտեղ հարկաւոր օգնութիւն կարելի է ստանալ, ի հարկէ ոչ ձրի: Գէտլիօլ և Դոսիօլան ներկայացրել են մի լիակատար ապակեայ, որը արժէ 700 ռուբլ: Հազիւ թէ այստեղ լինեն բոլոր դեղերը, քանի որ նրանք այնքան թանկ են և անմատչելի են ժողովրդին, այս գումարով կարելի է միայն մեր ասիական ապակեայ, աթոսարիսանա բանալ և ոչ կանոնաւոր դեղանոց:

Բժշկական ֆակուլտետները, զանազան բժշկական ընկերութիւններ, հիւանդանոցների բացակայ են այս մասում: Զարմանալի է որ դիտութեան մի այսպիսի նշանաւոր ճիւղը, որը ծառայում է մարդի առողջութեան նրա երջանկութեան ամենազրկաւոր ֆակտօրներից մէկին, կազմված է այսպէս անկարգ, աղքատ: Բժշկականութիւնը արժանի էր ասելի մեծ ուշադրութեան:

Թողնելով մի կողմ անհամար ակնոցներ, պէշանէներ, ջերմաչափեր, ժամացույցներ, աստրօլաբիաներ, զանազան բիմօլան և ֆիզիքական ապարատներ, դառնում եմ տպարանական և առհասարակ տպագրական գործին. այստեղ նոյնպէս բացակայ են մի քանի նշանաւոր տպագրական ֆիրմաներ, չին երևում մեծ լրագրներ և ամսագրներ. «Нива» ունի իր փարիսան, որը զանազան հրատարակութիւններով է լցրած. նա հաւանադրում է որ շարաթաթերով դուրս է գալիս 75,000 օրինակով: Առհասարակ նայելով հանդէսին, ընդհանրապէս, զանազան տպագրութիւններին,

լիտօգրաֆիայի հրատարակութիւններին, չէ կարելի ասել թէ որքան կատարելագործված է տպագրական արեստը և թէ որքան նա տարածվել է և դարձել է ժողովրդի համար կանքի գլխաւոր պիտոյքներից մէկը. այն հանգամանքը, որ ուսուսակ երեւելի հեղինակների շարագործիւնները իրանց թանգրութեամբ անմատչելի են ժողովրդին, պարզ ապացոյց է որ տպագրական գործը մեծ զարգացում չէ ստացել: Այս մասում արժանի է ուշադրութեան պ. Ալիսօլի, գէտօգրաֆի հարուստ, «գրող մեքենան»: Հանդիսում գտնվող մեքենան հիմա լաւ չէ բանում. ի հարկէ այսպիսի կարծ ժամանակում փախալը լաւ յատկութիւնը չէ մեքենայի համար: Ֆիլադէլֆիայի հանդիսում ասելի յարմար և ասելի պարզ «գրող մեքենայ» է հանդիսացրել մի ամերիկացի, բայց նա մինչև հիմա ովկիանոսը դեռ չէ անցկացրել: ЭКСПЕДИЦИЯ Заготовления Государственныхъ бумагеъ նոյնպէս հանդէս է բերել ջրային նշաններով թղթի օրինակներ, զարմանալիստիկային վերաբերեալ նիւթեր, տպագրութեան զանազան օրինակներ, նկարներ: Էկսպօզիցիան ունի 33 շոգեմեքենայ 420 ուժով, մշակների թիւը 1700 մինչև 2800 է, արդիւնագործում է տարեկան 130 միլիոն թղթի, որի արժողութիւնը հազարապատիկ ասելի է քան բանակութիւնը:

Չը նայելով որ էկսպօզիցիայի հրատարակութիւնները բազմաթիւ են, բայց նրանք էլ ամեն մի մարդու քսակին մատչելի չեն. նրանք էլ անմատչելի են բազմութեանը: Այս բաժնի ամենագլխաւոր մասը կազմում են ուսուսակարանական կան կազմակերպչութիւններ և ձեռնարկները: Ինչու կը լինի այստեղ էլ պահան-

Այդ տեսակ մոլորեցնող խօսքերին իհնչ պատասխանե առողջամիտ մարդը...

Աւետարանը մի է, մի է նոյն է որտեղ առնէք այդ գիրքը. միայն անպատճառ մայրենի, հասկանալի, հայոց աշխարհաբար լեզուով կարգացէք նրան: Այդ է մեր պարզ խորհուրդը:

Իսկ մոլորեցնող լռիկա ունեցողները թող շարունակեն իրանց աւերիչ գործը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աշխարհահալ գերմանացի գիտնական պրոֆէսոր Վերնիպֆ, կոմպատիբ իր արած ճանապարհորդութիւնից յետոյ, շարունակում է պարապել մեր երկրով և մշակել այն բոլոր նիւթերը, որ տարել է իր հետ: Գերմանացի գիտնականը կարգացել է իր ճանապարհորդութիւնը Բերլինի աշխարհագրական ընկերութեան մէջ, յետոյ հրատարակել է ընդհանուր հաշիւը թիֆլիսի հնագիտական ժողովի մասին, կարգացել է իր դասախօսութիւնը, որի մասին մենք նորերումս զօրեմբ Ա. Արծրունու թղթակցութիւն ենք տպել, վերջապէս այժմ պ. Վերնիպֆ կարգաց մի դասախօսութիւն Բերլինի Անթրոպոլոգիական ընկերութեան մէջ «կովկասի քարեդարձիքների մասին» (Steinwerkzeuge aus Kaukasien): Այդ դասախօսութիւնն էլ տպւեցաւ առանձին բրօշուրով, որ յարգելի գիտնականը պատիւ արաւ մեզ մեր խմբագրութեանն ուղարկելու:

Գիտուր է մի լրագրի խմբագրին վերաստուգել այն բոլոր լուրերը, որ նրան ամեն կողմից հաղորդում են: Յանկալի է որ թղթակիցները կրթով չը վերաբերվեն դէպի հասարակական երեւոյթները և հասարակական շահերը իրանց անձնական շահերից ու կրքերից վեր դասեն: Հրաւիրում ենք մեր թղթակիցներին միմայն ճշմարտութիւնը գրել, չը մոլորեցնել խմբագրին և չը դարձնել լրագիրը իրանց կրքերի խաղաղը, չը դարձնել նրան գործիք իրանց անձնական թշնամութեան դէպի այս կամ այն անձնակրթութիւնը:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ մեզ գրում են «Այստեղ աշունքից սկսած մինչև մայիսի վերջը շարունակ անձրևներ և ձիւն գալով, հասարակութեան ստորին դասը զրկված էր աշխատանքից: Յունիս և յուլիս ամիսներին ամենեկին անձրև չկալ, այդ ամիսները անցան առանց անձրևի, սաստիկ չու-

ջել կարգ ու կանոն. չէ կարելի գտնել ուսումնարանական սիստեմական կազմակերպութիւնը, սկսած տարրական ուսումնարանից, մինչև բարձր մասնագիտականը: Ռուս ժողովրդի ապրուստի ամենագլխաւոր աղբիւրը, երկրագործութիւնը, բոլորովին մոռացված է. ոչինչ բան չը կայ որ յիշեցնի երկրագործական ուսումնարանների գոյութեան մասին: Միւս կողմից տեխնիկական ուսումնարանների գործընկերի հարուստ կողմնակիցներ և ուրիշ ուսումնական ձեռնարկները ցոյց են տալիս որ շատ են հոգա անում նրանց զարգացման համար, մասնաւոր կայսերական Տեխնիկական ընկերութիւնը շատ է նպաստում տարրական տեխնիկական դպրոցների տարածման: Մի կողմից էլ երկաթուղիները իրանց սեփական պիտոյքների համար հիմնում են տեխնիկական ուսումնարաններ: Կան արհեստական և զեղադրական դպրոցների աշակերտների աշխատութիւնները, թէպէտ կասկածելի է որ հանդէս բերած իրեղենները աշակերտի աշխատութիւնները լինեն: Մի և նոյնը պէտք է ասել առհասարակ բոլոր ուսումնարանների մասին: Նայելով այստեղ այնտեղ ցրված աննպատակ առարկաների վրա, որոնք զանազան ուսումնարաններ, գիմնազիաներ, ինստիտուտներ, ներկայացրել են իբրև իրանց աշակերտների և աշակերտահիւնների աշխատութիւնները, համոզվում են որ շատ տարիներ, շատ ուժեր կորչում են ապարդիւն հասարակութեան համար, և թէ դեռ շատ ժամանակ կանցնի, մինչև որ դպրոցը կը դառնայ ճշմարիտ օգնական հասարակական կեանքի կանոնաւոր զարգացման: Բազմաթիւ դասագրքերի, խաղալիքների, դպրոցական կահ-կահալիքների մէջ հետաքրքրելի է «մանկական

երեւոյ: Վերջապէս օգոստոսի 3-ին անձրև եկաւ և երկիրը հովացաւ: Այս տարի հունձը և մրգեղէնները աջող չեն թեքեան նահանգում»:

Մարդ դարձացած է մնում և ամենեկին չէ կարող իրան բացատրել ինչ հաշիւներ են առաջնորդում առհասարակ մեր ինժեներներին թէ երկաթուղիները և թէ շօտները անցկացնելու ժամանակ: Որտեղ անց են կացնում երկաթուղին կամ շօտ, ամեն տեղ աղգարնակութեան ամենանշանաւոր տեղերը կողմն են թողնվում: Նոյնը պատահել է այժմ և այն շօտի հետ որ պէտք է կապի թիֆլիս Ալեքսանդրապոլի հետ: Այնպիսի նշանաւոր և արդիւնաւոր տեղեր, ինչպէս Մեծ-Շուլավեր և Ջալալ-Օղլի հեռու են թողել շօտի գծից. իսկ շօտն անցնում է միմայն Վորոնջովկա մարզականների գիւղի մօտով և պ. կուչնեբախի ապակեայ գործարանի մօտով: Մնացած տարածութեան վրա շօտն կատարելապէս անբնական եղբորով է անցնում:

Նոր-Նախիջևանի մօտ գտնված Ս. Խաչ վանքից օգոստոսի 2-ից խորեն վարդապետ Ստեփանէ գրում է մեզ հետեւալը: «Խոնարհաբար խնդրում եմ երկրորդս հրատարակելով յալտնել նոյնը, որոնք ինձ ցանկութիւն էին յայտնած սկսել իմ մօտ մանկավարժական պարագմունքները, որ հիւանդութեան պատճառով ստիպված եմ դադարեցնել այս գործը, գոնէ առ այժմ և թողնելով Ս. Խաչ վանքը, հոգալ իմ առողջութեան մասին»:

Մեր հակառակ մամուլի մէջ գործերից մէկը հեղինար հարցնում է՝ ինչպէս պ. Մեղաւորեան կարող էր ազատամտութիւն սովորել, այս կամ այն նոր միտք ըմբռնել, երբ ինքն ուսում է առնել Ներսիսիան դպրոցի «խաւարամիտ» և «չեւտաղէմ» ուսուցիչների մօտ: Գրան պատասխանելու համար հարկաւոր է միայն քիչ թէ շատ պատմութիւնն իմանալ: Յայտնի է որ ամենաժայռայեղ խաւար մի տն էրի աշակերտները շատ անգամ ոչ թէ միայն ազատամիտ, այլ նոյն իսկ արմատական են դառնում: Եւ դա, ի հարկէ, ուսուցիչների արժանատիութիւնից չէ, բայց բազմաթիւ պատճառներով և մասաւոր չափից դուրս գործող ճնշումից որ գործում են խաւարամիտները իրանց սաների վրա: Այդ տաներից ուղեղով հիւանդները աւելի էլ ըմբռնում են, ի հարկէ, իսկ առողջները միւս ծայրայեղութեանն են հասնում և դառնում են արմատական անգամ: Ինչպէս խաւարաւորների ձեռքով կառավարող դպրոցի ճնշող ազդեցութեան տակ աշակերտները իրանց սիրելի խաւարաւոր ուսուցիչների հակառակորդներ են դառնում շատ անգամ, այնպէս էլ, թող

զրադարանը» որի զրացուցակը տալիս է համառօտ տեղեկութիւն իւրաքանչիւր գրելի մասին: Ֆինլանդիան նոյնպէս ներկայացրել է իր դպրոցների աշխատութիւնները, զանազան դպրոցական իրեղեններ և այլն, մի և նոյն ժամանակ ֆինլանդացիք տալիս են ցանկացողին մի գրքով. «Обзоръ училищнаго вѣдомства Великаго Княжества Финляндскаго» որտեղ կարելի է գտնել տեղեկութիւնների ամբողջ ֆինլանդիայի ուսումնարանների մասին: Անարկովկասը ոչինչ չուրի այս բաժնում, իսկ Հիւսիսային կովկասի մի քանի ուսումնարաններ ներկայացրել են իրանց աշակերտների աշխատութիւնները:

Հայ ժողովուրդը այստեղ ունի մի փոքր պահարան, որի վրա նայելով հանդիսի այցելուն յիշում է որ կայ Արեւելքում մի հայ աղղ, որ ունի մի լաղարեան ձեմարան Մոսկովայի մէջ և հէնց այս ձեմարանը հանդէս է բերել վերոյիշեալ պահարանը, որտեղ փայլում են զանազան ձեռագրեր հայերէն, արաբերէն և այլն, պ. Էմինի և լաղարեանցի և ուրիշների աշխատութիւնները, նոյնպէս այստեղ գտնվում է մի աշակերտի ոտանաւորը, թարգմանութիւն Անակրիօնից: Ոտանաւորը, ինչպէս պահանջում է վերաւ արձ և դերաւ արձ է շարադրութիւնը, լինէ և ի հարկէ, ծն, րարք, սիգաձեմ և սրանց նման կլասիկական բառերով: Պահարանի վերեւում գտնվում է գիպսից շինած քաղաքի փոքրիկ մօդէլ. վերնագրիւ հաւատացնում է, որ սա Քրիստոսի ժամանակվայ Նրուսաղէմի տեղքն է. մօդէլը կաղմը է լազ. ձեմ. վարժապետներից մէկն է և ծախում է:

Առաջ քան թէ վերջացնել նամակս, ես չեմ կարող ծածկել իմ տխուր մտածմունքը այն հան-

չը մոռանան այդ, խաւարաւոր լրագրիներին, (որոնք իրանց սէրը յայտնում են կատիօլի պէս մարդկանց) ընթերցողները, կամ գոնէ նրանց առողջ մասը, վերջ ի վերջոյ անհաշտ թշնամի կը դառնան իրանց մոլորեցնող ուսուցիչ-խմբագիրների Միթէ մեր հակառակ մամուլը չը դիտէ որ ամեն երկիրներում ոչ թէ միայն ծայրայեղ աղաւաւմիտ, բայց և արմատական մարդկանց մեծ մասը դուրս են եկել կրօնական-խաւարամիտ դպրոցների. ճնշման տակից: Նոյն աղբեղութիւնը վերջ ի վերջոյ ունի միշտ և կղերական-խաւարաւոր մամուլը իր քիչ թէ շատ թարմ մնացած ընթերցողներին վրա:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են հետեւալը: «Յուլիսի 24-ին Շամախու թեմի առաջնորդ, Թադէոս կաթողիկոսը, այցելեց Ղուբան: Սրբազանը հետեւալ կերտիլի օրը Ս. Աստուածածնի եկեղեցում մի քարոզ անց, որով առաջարկում էր հասարակութեանը կրթել նոր սերունդը ժամանակի պահանջման համեմատ և բարեկարգել տեղական դպրոցը: Եպիսկոպոսը ցաւ յայտնեց որ Ղուբայի հոգեւոր դպրոցը չուրի մի սեփական շինութիւն, այլ գետնիցում է մի անյարմար շինութեան մէջ, այդ պատճառով հայր քարոզիլը հրաւիրեց հասարակութիւնը միջոց գտնել դպրոցի համար մի սեփական շինութիւն կառուցանելու: Հասարակութիւնը վաղուց է որ դիտաւորութիւն ունի մի նշանաւոր և հարուստ հայ պարսնին խնդրել որ նուրի դպրոցի շինութեան համար այն տեղը, որ գտնվում է եկեղեցուց կից և շատ յարմար է իր դիրքով: Հասարակութիւնը մեծ յոյս ունի որ պարտնը չի մերժի նրա խնդրիքը, որով և անջնջելի յիշատակ կը թողնի զուբայեցիների մէջ»:

Մեզ գրում են ՇԱՄԱԽԻՑ, որ յուլիսի 29-ին այդ քաղաքի հայ-աւետարանական քարոզիչ պ. Գրիգորի ամուսինը, տիկին Նդիսաբէթ, կաղմեց կանանց ժողով աւետարան քարոզելու համար: Տիկինը խօսակցութիւնը շատ հաւանեցին ներկայ գտնված կանայք: Քարոզը տեղի մի ամբողջ ժամ, սկսած 10-ից մինչև 11 ժամը:

«Русский Курьеръ» լրագրի խմբագիր պ. Լաւինի քաղաքի խմբագրութիւնը և համակարգիչն առաջարկում են հետեւալը: «Յուլիսի 15-ին տօնավաճառի դրօշակը բարձրացրին: Շրջականներից հաւաքված ուսմիկները և ամեն կողմից եկած վաճառ-

ՆԻԺՆԻ-ՆՈՎՂՈՐՈՒԻՑ յուլիսի 30-ից, մեզ գրում են հետեւալը: «Յուլիսի 15-ին տօնավաճառի դրօշակը բարձրացրին: Շրջականներից հաւաքված ուսմիկները և ամեն կողմից եկած վաճառ-

գամանքի առթիւ, որ մենք, հայերս, չը կարողացանք հանդիսին մասնակցել մեր ուսումնարաններով և տպարաններով, ես համոզված եմ որ մենք կարող էինք մեր ոյժերին համեմատ պատուար տեղ բռնել այստեղ: Եւ միմայն լրակատար իրաւունք ունի մի այսպիսի գործ իրագործելու: Հանդիսում մեր ներկայացրած առարկաները կենդանի վկայ կը լինէին հայ ժողովրդի կենդանութեան և նրա զարգացման աստիճանին: Այստեղ ժամանակը և միջոցը ձեռնարկիցս բաց ենք թողել: Մնում է ինձ բացականչել՝ հայի յիտի խնդրը, և նամակ վերջացնել:

Մոսկովան

ԸՆԴՀԱՆՈՐԸ ՀԱՅ ՈՒՍՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՔԻՒՍՈՒՄ

Ընդհանուր ուսուցչական ժողովի կարգադրիչ մասնաժողովը իր ուշիմ և եռանդոտ նահապետի հետ մէկ ամբողջ տարի է, ինչ որ զբաղված է ուսուցչական ժողովի նախապատրաստական գործերով: Մի ժողով, որը պէտք է զբաղվի մասնակցութեամբ կանոնաւոր և ճշմարիտ կրթութեան, մեր ամենապատկառելի, մեր մասնու և կեանքի խնդրով, արդարև ինքն ըստ ինքեան պէտք է զբաղուի յափշտակել մեր ամենախորին ուշադրութիւնը և համակրութիւնը: Բայց մարդ ապամայ ընկնում է մի տեսակ ցաւի, մի տեսակ հոգեկան դատարկութեան մէջ տնտեսով ակնյայտի, թէ ինչպէս մեր բոլոր աղգային լուսաւորութեան և կրթութեան նախանձախնդիրները, կարծես խօք են կապել դատապարտել իրանց Զարթոյթի պա-

ռականները ուշադրութեամբ նայում էին դրօշակի քաշելուն, որի այս կամ այն կերպ շարժվելուց սպասում էին իրանց ճակատագրի լաւ թէ վատ որոշումը: Այդ դրօշակի վրա հմայութիւններ և մարդաբնութիւններ են անում: Եթէ դրօշակը ուղիղ բացվեցաւ և դէպի արևելք ուղղվեցաւ, այդ կը նշանակէ որ այս տարվայ տօնավաճառը աջող կերպով անցնելու է գործիքը արդիւնաւէտ կը լինեն: Բայց եթէ կատարելապէս չը բացվի և կամ հակվի դէպի արևմուտք, տօնավաճառը վատ է լինելու: Այս տարի դրօշակը կախվելուս պէս, դժբաղդապէս դէպի արևմուտք ուղղվեցաւ: Հանդիսականները յօնքերը կիտած, տխուր դէմքով յետ դարձան հանդիսից. կարծես գրանով նրանց կեանքի վերջին թիւը կտրվեցաւ: Ուրեմն առուուուրը վատ է լինելու, ինչպէս համոզված են ամենքը: Առհասարակ այստեղ առուուուր անել կարելի է լինում յուլիսի 10-ից մինչև 10 կամ 15 սեպտեմբերի: Միայն տօնավաճառի իսկական առուուուրը սկսվում է յուլիսի 15-ից, դրօշակի բարձրացնելուց և շարունակվում է մինչև 25 օգոստոսի, դրօշակի ցածրացնելու ժամանակը: Բայց առուուուրը կանոնաւոր է հաշուած միայն դրօշակի ծածանման ժամանակամիջոցում և այդ միջոցում տուած կամ առած պարտաւորակները և զանազան պարտաթղթերը առուուուր երկար քան մինչև 25 օգոստոսի կատարվել չեն կարող: Յուլիսի 15-ից առուուուր բայց մինչև 25 օգոստոսի չը վճարված մուրհակները անշուշտ պրօտեստի են ենթարկվում: Այս ժամանակամիջոցից դուրս կատարած գործողութիւնները կարելի չեն կատարողի կաւելից: Առուուուրը թէ և արդէն սկսվել է դրօշակի կախ անելուց յետոյ, բայց վաճառականների գուշակութիւնները, կարծես, կատարվելու են: Անցեալ տարի այս ժամանակին առուուուրի ամենատաք միջոցն էր, իսկ այս տարի դեռ շատ մաղաղիւններ չեն բացված և մեծ մասամբ դեռ ապրանքները չեն ստացված: Առուուուրը բաւական դանդաղ է գնում: Վօլգա դեմն էլ այս տարվայ շրջերից սարսափելի կերպով ցամաքեց, այնպէս որ ապրանքներով բեռնաւորված շոգեմաւերը շատ դժուարութեամբ են հասնում այստեղ: Մինչև յուլիսի 20 այստեղ սաստիկ չաք էր, այնուհետև օդը մեղմութիւնը մինչև ցրտութեան աստիճանը հասաւ, վերջապէս յուլիսի 26 և 27 անձրևներ եկան, իսկ հաւ երկու օր է ջերմութիւնը դարձեալ հասնում է մինչև 38 աստիճան Բէօմիլի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳՂՈ-ԹԻՒՐԳԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ

Անգղ-թիւրքական դռնապարտութեան մասին լուրերը, չը նայելով, որ պաշտօնական

պահանջներ: Մենք երկու ամբողջ տարի անընդհատ սպասում էինք թէ մեր մասնաւոր մանկավարժները, մեր չնորհալի և ինքնուս ուսուցիչները, մեր դպրոցական վեհաբանները դուրս կը գան միանգամից և իրանց զաղախներով, մշտաբար խորհրդածութիւններով, կարծիքներով կը տարաքննեն մի այսպիսի պահանջի ձեռնարկութիւն, բայց ինչ ենք տեսնում իրականապէս. մի քանի հատ ու կտոր առաջարկութիւններ, մի քանի ցրված մտքեր այս և այն կողմից և այնուհետև երկար խորին լուսութիւն, կարծես թէ էլ ոչինչ չը կայ: Մի ուրիշ անգամ, մի յաջող ժամում մենք կը ցոյց տանք ընթերցողներին թէ ինչպիսի դժբաղդ դիպուածներ և դժուրակ հանգամանքներ հաւաքված ծանրացել են մեր բազմաշարք ուսուցիչների գլխին, որոց չնորհիւ օր ըստ օրէ թափուր են մնում մեր ուսումնարանները իրանց չնորհալի և անձնուրաց գործիչներէր: Թողնելով այդ վեհմ տաճարների վրա վաշ տալ բուււրիւն և դուգուալ ալկուաւն երին... առայժմ ի նկատի ունենալով առաջիկայ բացվելի ժողովը, մենք մեր կողմից մի պարտաւորութիւն ենք համարում առաջադրել կարգադրող յանձնաժողովի յարգելի անդամների ուշադրութեանը այս մեր վերջին աշխատութիւնը: Ինչպէս յայտնի է առաջիկայ ժողովի համար նախապատրաստական ամենամեծ խնդիրներից մէկը պէտք է համարել ժողովի պարապմունքները ամփոփ, սիստեմական ձևով ինչպիսի խնդիրների մէջ են ձեռնկերպված: Կարգադրող յանձնաժողովը դեռ ևս

աղբիւրներէն են ստացուած, միմեանց հա-
կաւորութիւն են, գրուած է „ГОЛОСЪ“ Այդ դաշ-
նագործութիւնը որոշում է այն պայմանները,
որոնց հիման վրա անգլիական կառավա-
րութիւնը թոյլ է տալիս Բ. Կրանը միջա-
մտել եղիպտական գործերին: Կեռ մի քա-
նի օր առաջ թիւրքաց հաւատարմատար-
ները յայտնեցին կոնֆերանսի մէջ, որ
այդ հարցի մասին Անգլիայի և Թիւրքիայի
մէջ համաձայնութիւնը վերջնականապէս
կայացել է: Նրանք յայտնեցին մինչև ան-
գամ այն պայմանները, որոնց հիման վրա
կայացել է այդ համաձայնութիւնը: Բ.
Կրանը պարտաւորեցաւ անգլիական զոր-
քերի հետ մի առժամանակ դուրս բերել իր
զօրքերը Եգիպտոսից և Եգիպտոսի մէջ ափ
չիլեցնել արդէն այնտեղ ուղարկված զոր-
քերը, մինչև Եգիպտոս չը հասնեն թիւր-
քաց զիւսուոր հրամանատարը և Բ. Կրան
գործակալները: Թեպէտ այդ յայտնու-
թեան մէջ չէ ասված, թէ դաշնագործութի-
ւնը ստորագրված է, բայց „համաձայնութիւ-
նը վերջնականապէս կայացել է“ նախագա-
տութիւնը ապացուցանում է այդ փաստը:

Մինչդեռ նորերումն Չարլզ-Կիլ յայտնեց
համայնքների ժողովի մէջ, թէ դաշնագործ-
ութիւնը դեռ ստորագրված չէ, առանց մեկնե-
լու, թէ ինչ բան կարող էր յետաձգել նրա
ստորագրութիւնը: Բացի այդ լուր է ստաց-
վել, որ թիւրքաց կառավարութիւնը առիթ
ունեցաւ բացատրութիւններ ստանալ լորդ
Կեֆերիինց դաշնագործութիւնը ստորագրե-
լուց առաջ թիւրքաց զօրքերին Եգիպտոս
ուղարկելու մասին: Մինչև անգամ տեղե-
կութիւններ կան, որ Անգլիայի և Թիւր-
քիայի մէջ անհամաձայնութիւն է տիրում
թիւրքաց զօրքերին անգլիական զիւսուոր
հրամանատարի իշխանութեանը ենթարկելու
մասին:

Ի գուր կը լինէր գործի այդչափ ուշանա-
լուն որ և է նշանակութիւն տալ Բ. Կրանը
առեւտուր է անում իր անփոփոխ սովորու-
թեան համեմատ, որ պահպանվում է ա-
մեն անգամ, երբ նրանից պահանջում են
սուլթանի ինքնասիրութեան համար ա-
նախորժ գիշտմանը անել: Գործը նրանով
կը վերջանայ, որ Անգլիայի առաջարկած

բոլոր պայմանները կընդունվեն և դաշնա-
գործութիւնը կը ստորագրվի: Կ. Պօլսի կառա-
վարութիւնը այնքան շատ է հնազանդվել
Անգլիայի պահանջներին, որ վերջին քա-
պէում անկարող է յետ կանգնել և յետ
կանչել իր զօրքերին, որոնց անգլիացիները
ուրիշ կերպ չեն թողնի Եգիպտոս, եթէ ոչ
իրանց դրած պայմաններին հիման վրա:
Վերեւ ասվածներին հիման վրա, չը նայելով
յիշեալ գործի յետաձգութեանը, անգլո-
թիւրքական միջամտութիւնը կատարված
իրողութիւն պէտք է համարել: Ուշադրել
Ալեքսանդրիա հասնելուց մի քանի օր յետ-
այդ դրականապէս կը սկսվեն պատերազմա-
կան գործողութիւնները: Հնդկաստանից
կանչված զօրքերի Սուէզ հասնելը այժմեա-
նից միջոց է տալիս անգլիական զիւսուոր
հրամանատարին սկսել պատերազմական
գործողութիւնները: Հաւանական է, որ անգ-
լիացիները կարճաւե՛ն Ալեքսանդրիայից և Սուէզից, մի
և նոյն ժամանակ ծածկելով Սուէզի ջրանց-
քը, որ մինչև այժմ բացառապէս նրանց
պաշտպանութեան տակ է եղել: ձմարիտ
է լորդ Կեֆերիին յայտնեց կոնֆերանսիա-
յին, որ Անգլիան համաձայն է Սուէզի
ջրանցքը միջազգային հսկողութեանը են-
թարկել այն պայմանով, որ այդ համաձայ-
նութիւնը չարդէյէ նրա սկսած պատե-
րազմական գործողութիւններին, որ նա ի-
րաւունք ունենայ Հնդկաստանից եկած զօր-
քերին Սուէզի ջրանցքի մօտ ափ իջեցնել և
որ մի և նոյն ժամանակ բոլոր պետութիւն-
ները իրաւունք ունենան իրանց զօրքերին
Սուէզի մօտ ափ իջեցնել, բայց Ֆրանսիա-
կան հաւատարմատար մարկիզ դը-Նոյայ,
իր կառավարութեանց հրահանգներ չունե-
նալով, ստիպված էր յայտնութիւններ չա-
նել և այդ պատճառով Սուէզի ջրանցքի
պաշտպանութիւնը միջազգային ընկերու-
թեանը ենթարկելու հարցը բաց մնաց:

Այսպէս թէ այնպէս եթէ այդ հարցը
վճռվի խաղաղ ճանապարհով և Անգ-
լիայի պայմաններին համեմատ, այդ հա-
կամանքը չի արդէն անգլիական զիւսուոր
հրամանատարին իրաւորեալ արշաւանքի
նախադիժը: Սուէզը դարձեալ կը լինի անգ-

լիացիների պատերազմական գործողութիւն-
ների յետակետերից մէկը, իսկ Արաբի-փաշա
գործ կունենայ մի թշնամու հետ, որ կը
յարձակվի Կայրէի վրա երկու կողմերից:
Եգիպտական ապստամբ զօրքերի համար
շատ դժուար կը լինի յետ մղել այդ շար-
ժումը և երեւի Արաբի-փաշա իր զօրքերով
յետ կը քաշվի դէպի երկրի խորքը: Այս
դէպքում անգլիացիները Կայրէին կողպ-
տված և աւերված կը գտնեն, որ կուշաց-
նէ նրանց արշաւանքի շարունակելը:
Այս բոլոր գործողութիւններին կատար-
ման ժամանակ Եւրոպան ստիպված կը լի-
նի չեզոք մնալ: Այդ դրութիւնը ուրախա-
լի չէ, բայց անփախչելի է: Եւրոպան ցան-
կանալով խաբէլ Անգլիային և նրա զիւլո-
մատական նախադիժների առաջն առնել,
ինքը ընկաւ այդ դրութեան մէջ: Ցանկալի
կը լինէր, որ այդ երկիրը խաղաղացնելուց
յետոյ Եւրոպան դարձեալ անպատրաստ չը
լինի և կարողանայ գործը այնպէս տանել,
որ եղիպտական հարցով հետաքրքրված պե-
տութիւնների շահերը չը փաստվեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիական «Journal des Débats» լրագի-
րը նկարագրելով Բէյրութի մէջ պատահած անց-
քը, որտեղ յայտնվեցաւ մահմադականների ֆա-
նատիկոսութիւնը քրիստոնեաների դէմ, համա-
րում է այդ անցքը մի տեսակ առաջադրանք թիւր-
քիայում քրիստոնեաների դէմ կատարվող նոր կո-
տորածներին: Լրագիրը ասում է, որ եւրոպա-
կան դիպլոմատիայի անտարբերութեան չնորոգի,
որին առաջնորդում է իշխան Բիւսթարկ, կարող է
պատահել որ Թիւրքիայում կը սկսեն հաշմեկ
բոլոր քրիստոնեաներին, որոնք 200 տարի շարու-
նակ խաղաղութեամբ էին ապրում այդ պետու-
թեան մէջ, Եւրոպայի հովանաւորութեան տակ:
Ֆրանսիական լրագիրը ակնացնում է որ մինչև
այժմ թիւրքաց ֆանատիկոսութիւնը պահպան-
վում էր յայտնի չըջանալների մէջ չնորոգի այն
վերաբար երկրորդ, որ ազդում էր Ռուսաստանը
Թիւրքիայի վրա: «Journal des Débats» ցանկա-
նում է անգլիացիներին կատարեալ աջողութիւն
Եգիպտոսում, որտեղ նրանք մարտնչում են մահ-
մադական ֆանատիկոսութեան դէմ, ցանկանում
է որ նրանք յաղթող հանդիսանան բոլոր արգելք-
ներից որ նրանց առջև դնում է թոյլ և ապար-
դին դիպլոմատիան: Լրագիրը կարծիքով մահմա-
տական ֆանատիկոսութեան զրգուկուց առաջա-

նալու վտանգը քաղաքակրթիւ աշխարհի համար
աւելի մեծ կարող է լինել, քան թէ առհասարակ
կարծում են:

—Հիւսիսային հեռագրական գործակալութիւ-
նը» հաղորդում է, որ Արաբի-փաշան, պատաս-
խանելով սուլթանի հրովարտուկին, որով սուլ-
թանը յայտնում է Արաբիին ապստամբ, ինքն էլ
իր կողմից զահնկեց է յայտնում սուլթանին և
նրա տեղը հրատարակում է Ալեկսիէի Շէրիֆին,
որին մահմադական աշխարհը Մալմաթի իսկական
ժառանգ է համարում:

—Լրագիրները հաղորդում են որ Ֆրանսիայի
առաջարկութեամբ, մեծ պետութիւնների Կ. Պօլսի
բոլոր դեսպանները մի պաշտօնական յայտնու-
թիւն են արել Բ. Կրանը, դարձնելով թիւրքաց
կառավարութեան ուղադրութիւնը մահմադական-
ների թշնամական արամադրութեան վրա քրիս-
տոնեաների դէմ, ոչ թէ միայն Միջագետք, բայց
և Օսմանեան պետութեան միւս մասերում:

—Լրագիրները հաղորդում են, որ ինչպէս լրս-
վում է, Եգիպտոս ուղարկվող թիւրքաց զօրքի
հրամանատարութիւնը կը յանձնվի Եգիպտոսի
խեղիվին:

—Անգլիան պահանջում է որ Եգիպտոս ու-
ղարկվող թիւրքաց զօրքերը անգլիացի զորապետ-
ների հրամանատարութեան տակ զրկվեն, իսկ
Թիւրքիան ընդհանրապէս պահանջում է որ թիւր-
քաց և անգլիական զօրքերը միմեանցից անկախ
գործեն Եգիպտոսում, և այդ երկիրը խաղաղաց-
նելուց յետոյ երկու պետութիւնների զօրքերն էլ
միաժամանակ հեռանան Եգիպտոսից:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 օգոստոսի: „Правит.
Вѣстн.“ լրագիրը տպում է հրահանգներ
լեռնային մասնաւոր արդիւնաբերութեան
վրա հսկելու մասին Եւրոպական Ռուսաս-
տանի լեռնային հինգ շրջանների մէջ:
„Новое Время“ լրագիրը հաղորդում է,
որ գանձարանից պետական բանկին յանձ-
նած 67 միլիոն կրեդիտական ըուրլինքը կո-
չնացվեն: Կոմս Լիտկէի մահուան մասին
լուրը սուտ է: Ասում են, որ կանանց բժըշ-
կական կուրսերի մէջ ընդունելութիւն
չի լինի և որ նրանք հետզհետեւ կը փակ-
վեն: „Новости“ լրագիրը լսել է, որ զի-
նուորական պրօզիմապոէզները զինուորական
ուսումնարաններ կանոնակարգվեն: Կոցենա Գօլ-
ցեկ թողնում է Մօսկվայի համալսարանը:
„Օրէնքների ժողովածու“ մէջ տպված է
ուսումնարանական դաշնագրի ծրագիրը
802 1/2 միլիոն Ֆրանկ վարձատրութեան
մասին:

10 ՆՆՈՆ, 6 օգոստոսի: Եգուց անգլիա-
ցիները կը յարձակվեն Արաբիի վրա ծո-
վից և ցամաքից:

մի այդպիսի ծրագիր չունի պատրաստի, նա միայն
ընդհանուր ֆիւրգը երով ձևակերպած ունի
իր արձանագրութեանց մէջ պարագմանց ծրագրի
նիւթը: Բացի դրանից յանձնաժողովը հրատա-
րակել է մի շարք հարցեր, որոնք կարող են
դիւրացնելու ուսուցիչների գործը ընթերցողներ
կազմելու կամ վիճարանելու: Միւս կողմից մեր
հաստատ համայնքներն է, որ մի այդպիսի ծրագիր
կազմելու մեծ դեր պէտք է խաղայ այն անձը,
որը պէտք է հրաւիրվի ընդունելու ուսուցչական
ժողովի: Գեկ և վարի պաշտօնը: Մենք մի
կողմից որպէս անդամ պարագմանց ծրագիրը
կազմող երբեք մասնաժողովի և միւս կողմից
որպէս ինն ամսայ մշակ դպրոցական գործի, վըս-
տահանում ենք առաջարկել պարագմանց համար
հետեւեալ ծրագիրը: Այս ծրագիրը մենք կազմել
ենք ի հարկէ այն չափով, ինչ չափով որ ըմբռ-
նել ենք պարագմանց ժողովի սահմանը: մենք
մեր կողմից դիշեր ցերեկ մի և նոյն ժամանակ
ներկայ ենք գտնվել և մասնակցել մի ուսուցչա-
կան ժողովի (սիեզիլի): Եթէ այս ծրագիրը մի մա-
սով անգամ պիտանաւոր լինի, դարձեալ ուրախ
կը լինենք:

Յրադրել ընդհանուր հայ ուսուցչա-
կան ժողովի պարագմանց համար:

Ընդհանուր ուսուցչական ժողովի պարագ-
մանքները երկու մասի կարելի է բաժանել՝ տե-
սակաւ և գործնական:

Տեսակաւ մասի պարագմանքները.—
Ընդհանուր խնդիրն է:

1. Մանկավարժութեան ընդհանուր և զիւսու-
ակցութեան ինքնակազմակերպութիւն-
ներ:

2. Անհատականութեան նշանակութիւնը կըր-
թութեան մէջ:
3. Մի դասախօսութիւն ֆիզիքական կըր-
թութեան վրա:
4. Մի դասախօսութիւն բարոյական դաս-
տիարակութեան վրա, դպրոցական առողջապա-
հութեան պայմանների վրա առանձին ուղադրու-
թիւն դարձնելով:
5. Նկատողական ձևով ուսուցանելու նշա-
նակութիւնը:
6. Միական դպրոցների նշանակութիւնը և ա-
ռաձայնաբերութիւնները:
7. Ինքնուրոյնութեան, ինքնակրթութեան,
ինքնազարգացման նշանակութիւնը դպրոցում:
8. Դպրոցական զբաղարան և ընթերցանալի
զրբեր:
9. Կիրակնօրեայ դպրոցներ:
10. Լսարաններ:
11. Շարժական դպրոցներ:
12. Երեկոցեան դպրոցներ:
13. Արհեստաւորաց դպրոցներ:
14. Խառն դպրոցներ (տղաների և աղջկաների
համար):
15. Ռուսաց լեզուն որ տարւանից պէտք է
սկսել հայոց դպրոցներում:
16. Որպիսի միջոցներով կարելի է շատաց-
նել աշակերտների, մանաւանդ աշակերտուհիների
թիւը:
17. Մի դասատուն երեք բաժանմունքով
և երեք ամսայ դասընթացը ունեցող դպրոց-
ների մասին:
18. Երեք կամ երկու դասատուն և իւրաքան-
չիւր դասատուն մի մի և երկու երկու բա-

ժանմունք ունեցող դպրոցների մասին:

19. Մի դասախօսութիւն մտաւոր կրթութեան
վրա:
20. Միական դպրոցների ծրագիրը վերոյիշեալ
երկու պայմանների մէջ:
21. Դպրոցական կարգապահութիւն:
22. Գիւղատնտեսական դպրոցների մէջ և գիւ-
ղատնտեսական դպրոցներից տարածման նշա-
նակութիւնը, տեղեկութիւններ այդպահութեան,
չերամապահութեան, տաւարաբուծութեան և դա-
նադան բերքերի մշակութեանց վրա:

Մասնաւոր խնդիրներ.

1. Կրօնի մեթօդիկաւ. հին և նոր ե-
ղանակների նկարագրութիւնը. այդ առարկան նը-
կատողական կերպով աւանդելու օժանդակող մի-
ջոցները և գործադրութիւնը. կրօնի ծրագիրը.
դասադրերի ընթերցումը:
2. Մայրենի լեզուի մեթօդիկաւ. հին և նոր
եղանակների նկարագրութիւնը. նորի առաւելութիւն-
ները. ծրագիրը որոշեալ դասընթացով. դասադ-
րերի ընթերցումը:
- Մի և նոյն կարգով մնացեալ բոլոր առարկա-
ների մեթօդիկաւ, ծրագիրը, օժանդակող միջոց-
ները, դասադրերի ընթերցումը:

Գործնական մասը

Գործնական մասի պարագմանց զիւսուոր խըն-
դիր լինելու է՝ օրինակելի դպրոցի կազմութիւնը
իր մի քանի բաժանմունքներով, որտեղ առաւել
ուսուցիչները ամենայն առարկայից դասախօսե-
լով պէտք է գործնական կերպով ցոյց տան տե-
սական դատողութեանց մէջ ընդունված ձևերը և
եղանակները: Իւրաքանչիւր ուսուցիչ դասախօ-

սութիւնից առաջ պէտք է յայտնէ դասաւու-
թեան նիւթը և կոստալեկորը, իսկ դասախօսու-
թիւնից յետոյ քննվում է ընդհանուր ժողովում
այդ դասախօսութիւնը:—Այդ գործնական դասա-
խօսութեանց մէջ նոյնպէս պէտք է ցոյց տալ
այն օժանդակող միջոցները և պարագմանքը, ո-
րոնք կընդունվեն ընդհանուր ժողովի տեսական
մասնում: Գործնական պարագմանքներին է վե-
րաբերում նոյնպէս՝ այդ ինչ մէջ գործնական կեր-
պով ցոյց տալու ծառերի պատուաստման, բար-
ւորման և խնամատարութեան հետ մի քանի
կարևոր ֆիզիքական, երկրագործական և
առհասարակ դիւրապատեհական գոր-
ծիքները կազմութիւնը և գործադրութիւնը. տե-
ղական կարևոր հաստատութիւններ (փո-
խատու խնայողական ընկերութեան, դիտանոցի
ակլիմատայիական այգիի, գիւղատնտեսական
ընկերութեան և այլն) ցոյց տալը և ծանօթաց-
նելը. ուսումնական զբօսանք (էկսկուր
սիա) հայրենագիտութեան, բնական գիտութիւն-
ների (հանքաբանութեան, բուսաբանութեան, կեն-
դանաբանութեան) գործնական կերպով դաս տալը
և օգտվելը....

Վերջացնում ենք կրկնելով որ եթէ այս ծրա-
գիրը մի մասով անգամ կարող կը լինի ծառայել
ուսուցչական ժողովին, մենք դարձեալ շատ ու-
րախ կը լինենք:

Կ. Թէմ.

